



ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՆՎԻՐՎԱԾ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ
100-ԱՄՅԱԿԻՆ

Կոմիտաս վարդապետ... Այս մի անվանում է, որի կողքից յուրաքանչյուր հայ մարդ, յուրաքանչյուր զարգացած անձնավորություն չի կարող անցնել՝ ներքին ակնածումի զգացումը չզգալով: Կոմիտասն իր գործունեությամբ փայլատակեց հայոց երկնակամարում և, որպես մի լուսավոր ջան, մնաց հավերժությամբ: Նա ամբողջությունն էր՝ մարդ-հոգևորական-արվեստագետ եռանգր ամբողջության: Նրա արվեստը ամբողջությունն է՝ իրեն ծնող ու սնող ժողովրդի հոգևոր մշակույթի:

Ահա այս հանճարեղ վարդապետ-երգիչ-երգահանի ծննդյան 100-ամյակն է, որն իր ողջ ոգու հարստությունը նվիրաբերեց հայ ժողովրդի ինքնուրույն արվեստի, ինքնուրույն մշակույթի մատուցմանը ողջ աշխարհին: Այդ նա էր, որ աշխարհի զարգացած ժողովուրդներին ներկայացրեց հայոց անաղարտ, մարդասիրական, ազնիվ աշխատանքով ու նույնքան ազնիվ ձգտումներով ասրել ցանկացող ժողովրդի հոգեկան հարստությունները:

Եվ ժողովուրդն էլ այսօր արժանի է մատուցում իր մեծ զավակի հիշատակին՝ նրա ծննդյան 100-ամյակը համարելով համաժողովրդական ցնծության տոն:

Նոյեմբերի 17-ին, երկուշաբթի.—Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի է ունենում ակադեմիայի արվեստի ինստիտուտի, Հայաս-

տանի երգահանների միության և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի միացյալ գիտական նստաշրջանի՝ նվիրված Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակին:

Այստեղ էին հավաքվել արվեստի, գիտության, մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ, հյուրեր՝ Սովետական Միության եղբայրական հանրապետություններից:

Նստաշրջանը ներածական խոսքով բացում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը: Նա ասում է, որ «Կոմիտասը մի երևույթ էր, որի նշանակությունը դուրս է գալիս երաժշտության և արվեստի սահմաններից»: Մեծ գիտնականը խոսելով Կոմիտաս վարդապետի, որպես մարդու և արվեստագետի, արժանիքների մասին, շեշտում է նաև այն հորդատառ, ջինջ ու անաղարտ աղբյուրի մասին, որից սնունդ ու ներշնչանք է ստացել մեծ արվեստագետը: Եվ հիմա, տարիներ անց, դարձած զարկերակի մի մասնիկ, ապրում է հենց այդ ժողովրդի սրտում՝ ուժ ու ավյուն հաղորդելով նրան:

Կոմիտաս վարդապետն իր ստեղծագործական բուռն կյանքն ապրեց այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդն ապրում էր իր կյանքի ողբերգական դրվագներից մեկը: Սակայն հայ ժողովուրդն ապրեց և հաղթանակեց: Կոմիտաս վարդապետն իր մարտիրոսությամբ նույնպես հաղ-

թանակեց և հաղթանակելով՝ անմահացավ ու սրբացավ:

Նստաշրջանում իրենց զեկուցումներով հանդես են գալիս՝ արվեստագիտության թեկնածու Գ. Գյոդակյանը՝ «Կոմիտասը և համաշխարհային երաժշտությունը», արվեստագիտության դոկտոր-պրոֆեսոր Գ. Զիսիկվաձեն (Վրաստան)՝ «Հայրենի ավանդակն երաժշտության բարգավաճման անխնջ մարտիկը», արվեստագիտության թեկնածու Մ. Մուրադյանը՝ «Կոմիտասը և հայ երաժշտության ցուցադրումը Եվրոպայում», Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ղանալանյանը՝ «Կոմիտասը և ժողովրդական երգի բանաստեղծական խոսքը», արվեստաբանության դոկտոր-պրոֆեսոր Յ. Վիտոլիկը (Լատվիա)՝ «Լատիշա-հայկական երաժշտական կապերի պատմությունը», արվեստագիտության թեկնածու Ռ. Աթայանը՝ «Հայ քաղաքային ժողովրդական երգը Կոմիտասի ստեղծագործության մեջ», երաժշտագետ Կ. Խուդաբաշյանը, ամերիկահայ գրող և երգիչ Հ. Ասատուրյանը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Թ. Ծաննազարյանը, արվեստագիտության թեկնածու Ն. Թանմիզյանը, արվեստագիտության թեկնածու Մ. Ղազարյանը, եզիպտահայ երգահան-խմբավար Է. Հակոբյանը, Լապպիգի կոնսերվատորիայի պրոֆեսոր Ռ. Ծչեկուսը, որոնք բոլորն էլ իրենց զեկուցումներում հանգամանորեն խոսում են Կոմիտաս-մարդու և արվեստագետի ստեղծագործական կյանքի բազմաթիվ հարցերի վերաբերյալ, ցույց տալիս նրա տեղը հայ ազգային և համաշխարհային երաժշտական արվեստի անդամատանում:

Նոյեմբերի 19-ին, չորեքշաբթի.—Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակին նվիրված տոնահանդեսների նախերգանքը եղավ Երևանի նորակառույց կոնսերվատորիայի առջև, պուրակում, նրա հուշարձանի հիմնադրման հանդիսավոր արարողությունը:

Առավոտյան ժամը 11-ին այդտեղ էին հավաքվել հազարավոր երևանցիներ, արվեստագետներ, նկարիչներ ու գրողներ. բանվորներ՝ ու ծառայողներ, ուսանողներ ու Կոմիտասի մեծ արվեստի երկրպագուներ:

Սկսվում է հանդիսավոր արարողությունը: Ամբիոնից ներկաներին է դիմում ՀԿԿ Երեվանի քաղկոմի առաջին քարտուղար Լ. Պ. Ղարիբջանյանը.

«Այսօր մենք այստեղ ենք հավաքվել հանդիսավոր պայմաններում դներու հայ դասական երաժշտության հիմնադիր, համաշխարհային ճանաչում ունեցող կոմպոզիտոր

Կոմիտասի ծննդյան 100-ամյակի առթիվ կանգնեցվելիք հուշարձանի հիմնաքարը: Իսկ մեր նվիրակյան սիրտ և խոր հարգանքի արտահայտությունն է այն մարդու նկատմամբ, որի քազներանգ ստեղծագործությունը հանդիսանում է հայ ժողովրդի երաժշտական պատմությունը»:

Իր խոսքի մեջ Լ. Պ. Ղարիբջանյանը շեշտում է մանավանդ, որ Կոմիտաս-արվեստագետի արձանը դրվելու է հենց Երևանի նորակառույց կոնսերվատորիայի առջև, մեծ երգահանի տարիների երազանքը հանդիսացող և այժմ իրականություն դարձած այս երաժշտական հաստատության առջև, որպեսզի այստեղ «կանգնած» նա իր «ներկայությամբ» ներշնչանքի աղբյուր և խթանման ուժ հանդիսանա մեր երիտասարդ երաժշտ-երգահանների համար:

Ամբողջ շրջապատը ողողվում է կոմիտասյան հուզաբաթյամբ ու քաղցրահունչ մեղեդիներով:

Այսպե՛ր էլ են ունենում՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսուցիչ, արվեստի վաստակավոր գործիչ Ղազարոս Սարյանը, ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի թղթակից-անդամ, Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը, Լատվիայի երգահանների միության նախագահ, երգահան Ռոման Գեդերտը և ականավոր բանաստեղծ Պարույր Սևակը:

Միտինգն ավարտվում է: Նորից հնչում են կոմիտասյան մեղեդիները: Պուրակի մեջ դրված հիմնաքարի վրա գրված է. «Այստեղ կդրվի Կոմիտասի արձանը»:

Նոյեմբերի 19-ին, չորեքշաբթի.—Երևանի Կոմիտասի անվան զբոսայգին դարձել է բազմամարդ: Տեղի պանթեոն են եկել բազմահազար հայեր և օտար հյուրեր՝ իրենց երախտագիտությունը հայտնելու այն մեծ հային, որի աճյունը 1936 թվականի մայիսյան մի երեկո, Ֆրանսիայից տեղափոխվելով Երևան, հավերժ հանգչեց հայրենիքի գրկում:

Զբոսայգով մեկ հնչում են կոմիտասյան հոգեզմայլ մեղեդիները:

Միտինգը ներածական խոսքով բացում է Երևանի քաղապետի գործկոմի նախագահ Գ. Հաարաթյանը: Նա իր խոսքում ասում է, որ Կոմիտասը մեծ քաղաքացի ու հայրենասեր էր, որն իր մեջ խտացնում էր հայ ժողովրդի բնավորության լավագույն գծերը: Մեծ երգահանի կյանքը և գործունեությունը զեղեցիկ պատճառ են դարձել հայ աշխատավորի համար՝ սիրով և նվիրվածությամբ ծառայելու ժողովրդին:

Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը, հանրապետության ժողովրդ-

դախան արտիստ Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ, կատարում է մեծ երգահանի «Գուրջանի երգ»-ը:

Այնուհետև ելույթ են ունենում՝ երգահան Է. Հովհաննիսյանը, Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի բանվոր Մ. Մխիթարյանը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողուհի Զ. Տեր-Ղազարյանը, ախյուղքահայ երգահան և խմբավար Է. Հակոբյանը (ԱՄՆ), ՄԱՀՄ ժողովուրդների երաժշտության հանձնաժողովի նախագահ Յա. Ս. Սողոմոնյան, որոնք բոլորն էլ շեշտում են այն մեծ ծառայությունը, որ մատուցել է մեծ երգահանը իր ժողովրդին և հանուր մարդկությանը:

Միտինգն ավարտվում է: Կրկին հնչում է կոմիտասյան մեղեդին՝ «Կուժն առա, գնա, գնա»՝ երգչախմբի կատարմամբ:

Այնուհետև պետական ղեկավար անձնավորությունները, արվեստի, գիտության, մշակույթի գործիչները, ախյուղքահայ և օտար հրավիրյալներն ու այլ անձնավորություններ ծաղկեպսակներ են գետեղում մեծ Կոմիտաս վարդապետի շիրմի վրա:

Բոլոր ներկաները նախքան հեռանալը պանթեոնից, հանդիսավոր լույությամբ, գրլուխները խոնարհած, անցնում են մեծ երգահանի գերեզմանի մոտով:

Նոյեմբերի 20-ին, հինգշաբթի.—Հնադարյան

Էջմիածնի կենտրոնական հրապարակ են հավաքվել տեղի և մոտակա գյուղերի բնակիչներ, բազմաթիվ երևանցիներ, հոծ բազմություն:

Այստեղ են ժամանում նաև պետական կառավարական ղեկավար անձնավորություններ, հյուրեր եղբայրական հանրապետություններից և աշխարհի շատ այլ երկրներից, արվեստի, գրականության և մշակույթի ակադեմիկոս գործիչներ և այլ անձնավորություններ:

Հայ ժողովրդի համար այս պատմական վայրում տեղի է ունենում մեծ Կոմիտաս վարդապետի հուշարձանի բացմանը նվիրված միտինգ:

Միտինգը ներածական խոսքով բացում է Հայաստանի կոմունիստական կուսակցության Էջմիածնի շրջկոմի առաջին քարտուղար Ռ. Ջաքոյանը:

«Այսօր Կոմիտասը երկրորդ անգամ է գալիս Էջմիածին, —ասում է նա:—Գալիս է հավերժ մնալու և այլևս երբեք չվերադառնալու պայմանով»:

Հնչում է կոմիտասյան հոգեթով մեղեդին. երգում է Էջմիածնի դպրոցների աշակերտներից կազմված երգչախումբը: Նրանց մանկական անկեղծ շուրթերից հնչում են

կոմիտասյան երգերը և կարծես ի լուր աշխարհի շեփորում. «Կենդանի է հայ ժողովուրդը: Կենդանի է մեծ Կոմիտասը»:

«Հորեյանական օրերին մենք հուշարձաններ ենք կանգնեցնում մեր մեծ գործիչներին.—իր խոսքի մեջ ասում է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը:—Այսօր էլ մենք հավաքվել ենք Կոմիտասի հուշարձանը բացելու համար: Այդ հուշարձանները մենք դնում ենք հայկական ժայռերից վերքրած քարե ամուր պատվանդանների վրա:

Այդ հուշարձանները բոլորը միասին ունեն նաև մեկ ընդհանուր ակնորտակ պատվանդան՝ դա Սովետական Հայաստանն է, դա վերածնված հայ ժողովուրդն է, դա մեր ամեևօրյա հաղթանակներն ու նվաճումներն են, դա մեր ներկան է, որն անընդհատ նոր փայլ, նոր լույս և նոր երանգ է տալիս մեր բազմադարյան անցյալին: Այդ լույսի տակ հառնում են մարդկության առջև գաղթի ու կոտորածների ճամփաներին դարերով թաղված մեր հոգևոր արժեքները»:

Այնուհետև ելույթներ են ունենում՝ երգահան Ա. Հարությունյանը, ամերիկահայ դաշնակահարուհի Լյուսի Իշխանյանը, Վրաստանի երգահանների միության վարչության քարտուղար Գ. Թորաձեն, Հայկական ՄԱՀ կուլտուրայի մինիստր Կ. Ուդունյանը և շատ ջերմ ու սրտագին խոսքեր ուղղում անմահ երգահանի հասցեին:

Ավարտվում է միտինգը: Հնչում է կոմիտասյան երաժշտությունը:

Այնուհետև դանդաղ իջնում է հուշարձանի սպիտակ ծածկույթը, և ամբողջ հասակով մեկ մեր առջև է հառնում մեծ Կոմիտաս վարդապետը: Այդ պահին թվում է, թե նա վարագույրի ետևից դուրս է գալիս, որպեսզի որպես խմբավար ղեկավարի երբեմնի իր կողմից ղեկավարվող Գևորգյան ճեմարանի մանկական երգչախումբը: Դպրոցականներից կազմված երգչախումբն ավելի ոգևորությամբ է երգում՝ խանդավառվելով անմահ խմբավարի «ներկայությունից»:

Հուշարձանի հանդիսավոր բացումից հետո ներկաներն ուղղվում են դեպի նախկին Գևորգյան ճեմարան:

Թանգարանը ձևավորված է Հայաստանի շատ անվանի նկարիչների կողմից, հսկ ցուցանմուշները պատմում են անմահ երաժիշտագետի կյանքի ու գործունեության մասին: Նորից ու նորից հնչում են կոմիտասյան երգն ու երաժշտությունը:

Նախկին Գևորգյան ճեմարանը, որը շուրջ 40 տարուց ի վեր միջնակարգ դպրոց էր, այժմ այս առիթով վերածվել է «Կոմիտասյան թանգարան»-ի:

Նոյեմբերի 21-ին, ուրբաթ.—Մեծ երգահան Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակին նվիրված տոնահանդեսների վերջին ակորդը հանդիսացավ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի դահլիճում կայացած հանդիսավոր նիստը:

Բեմի խորքից հանդիսականին է նայում մեծ երգահանի հսկայական դիմանկարը՝ շրջապատված թարմ ճաշիկներով:

Դահլիճ են հավաքվել պետական-կառավարական բարձրաստիճան անձնավորություններ, հյուրեր Սովետական Միության տարբեր հանրապետություններից ու աշխարհի շատ այլ երկրներից, արվեստի, գրականության ու մշակույթի ականավոր ներկայացուցիչներ ու բազմաթիվ այլ անձինք:

Հանդիսավոր նիստին ներկա է նաև Հայոց Հայրապետը, հատուկ օթյակում, ընկերակցությամբ ու Հայկազուն և ու. Վահան սրբազանների, տ. Ծնորիք վարդապետի և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանի:

Հանդիսավոր նիստը ներածական խոսքով բացում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը: Նա իր ելույթում համատարակի խոսում է Կոմիտաս վարդապետի կյանքի ու գործունեության մասին, նրա ապրած ժամանակաշրջանի մասին, մի ժամանակաշրջան, որը լի էր հայ ժողովրդի համար ողբերգություններով և հենց իր իսկ՝ ժողովրդի բնաջնջումի վտանգով:

«Բայց մի ժողովուրդ, —ասում է Ն. Հարությունյանը,—որը մարդկությանը խորեմացու և Եզնիկի պես գիտնական միտք է տվել, իր նահատակություններն ու հոգու ալեկոծումները գեղանկարելու համար՝ Եղիշեի ու Նարեկացու պես բանաստեղծ-փիլիսոփաներ, և նվիրական ձգտումներն ու խոհերը երգելու համար՝ Թումանյանի ու Կոմիտասի պես արվեստագետներ, այդպիսի մի ժողովուրդ չէր կարող մեռնել բռնի ուժի տակ, չէր կարող անհետանալ աշխարհից»:

Դահլիճի կամարների ներքո հնչում են ՍՍՀՄ և ՀՍՍՀ պետական հիմները:

«Խոսք Կոմիտասի մասին» գեկուցումով հանդես է գալիս Հայաստանի երգահանների միության վարչության նախագահ Էդ. Միրզոյանը:

«Ժամանակը, —ասում է գեկուցողն իր խոսքում,—հոգևոր արժեքների ամենախիստ ու անկաշտ դատավորը, միշտ էլ գործում է հոգուտ իսկական մեծությունների:

...Կոմիտասը հայ երաժշտական արվեստի արշալույսն էր: Երբ նա ստեղծագործական ասպարեզ մտավ, հայ նոր երաժշտությունը կատարում էր իր սուաջին քայլերը: Չնա-

յած նախորդների՝ մի շարք տաղանդավոր կոմպոզիտորների արգասավոր գործունեությանը, դեռևս շատ բան պարզ չէր, անորոշ էր ու աղոտ, նույնիսկ երբեմն հերքվում էր հայ երաժշտության ազգային ինքնատիպությունը: Կոմիտասն իր գործունեությամբ ցուց բոլոր կասկածները, թերահավատներին ստիպեց լռել, տատանվողներին համոզեց, իսկ իր համախոհներին ներշնչեց աներնր հավատ: Մեծ վարպետն իր գյուտերով ու անաղարտ արվեստով հարթեց այն ուղին. որով ընթացավ հայ ազգային երաժշտության հետագա ամբողջ զարգացումը: Նա իր անզուգական հանճարով, իբրև ջահ՝ լուսավորեց մայրենի երաժշտության անդաստանը, խավարի խորքից դուրս բերեց մեր ժողովրդի հոգու մոռացված մարգարիտները՝ գեղջուկի պարզ, սրտահույզ երգերը»:

Այնուհետև ելույթներ են ունենում՝ ՍՍՀՄ երգահանների միության վարչության քարտուղար, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Գ. Կոբալևսկին, ՌՍՖՍՀ կուլտուրայի մինիստրի տեղակալ Գ. Ալեքսանդրովը, Բելոռուսիայի երգահանների միության վարչության նախագահ, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Գ. Ռ. Ծիրմանը, Ուզբեկստանի երգահանների միության վարչության նախագահ Ա. Խ. Զաբարովը, Վազախտանի երգահանների միության վարչության նախագահ Ե. Ռահմանդիևը, Վրաստանի երգահանների միության վարչության սուաջին քարտուղար, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Ա. Մ. Բալանչիվաձեն, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչ Ա. Կ. Ծարիֆովը, Լիտվայի երգահանների միության վարչության նախագահի տեղակալ Գ. Գ. Տամուլոնուսը, Մոլդավիայի ժողովրդական կրթության մինիստր Ե. Ս. Պոստովոյը, Լատվիայի կուլտուրայի մինիստր Վ. Մ. Կաուպուժե, Տաջիկստանի երգահանների միության վարչության նախագահ Ծ. Ս. Սայֆուդդինովը, Թուրքմենիայի երգահանների միության վարչության նախագահ Ա. Կ. Կուլիևը, Էստոնիայի կոմկուսի Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչի տեղակալ Ա. Կ. Սաարը, «Կուլտուրա» շաբաթաթերթի խմբագիր Ա. Կլյուկովսկին, Արաբական Միացյալ Հանրապետության երգահանների միության քարտուղար Աբդել Ռահիմը, Ճապոնիայի երգահանների միության պրեզիդենտ Սաբույո Տոկատան, ամերիկահայ գրող և կոմիտասագետ Հ. Ասատուրը: Ելույթ ունեցողները բոլորն էլ իրենց արտի անկեղծ խոսքն են ուղղում անմահ Կոմիտաս վարդապետի նարվեստին ու անձին ուղղված և չափազանց բարձր գնահատում նրա կատարած դերը հայ ազգային երաժշտության բնագավառում:

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Այ. Սպենդիարյանի անվան օպերայի և քալե-տի պետական ակադեմիական թատրոնի նույն դահլիճում տեղի է ունենում հանդի-սավոր նիստի գեղարվեստական բաժինը, որին մասնակցում են հայ և օտար բազմա-թիվ նշանավոր արվեստագետներ:

Համերգին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը՝ Իր շքախմբով:

Դեկտեմբերի 8-ին, չորեքշաբթի.—Մոսկ-վա: Միությաննների տան պունագարդ դահ-լիճ: Ժամը 19-ն է: Բեմի խորքից, լույսերի մեջ ողողված, երևում է մեծ երգահանի հսկա դիմանկարը:

Դահլիճ են հավաքվել պետական-կառա-վարական բարձրատիճան անձնավորու-թյուններ, արվեստի, գիտության, մշակույթի և աշխատավորության ներկայացուցիչներ:

Երեկոն բացում է համամիութենական հո-բելյանական հանձնաժողովի նախագահ, ՍՍՀՄ երգահանների միության վարչության նախագահ Տ. Ն. Խրեննիկովը:

«...Ամեն մի ժողովրդի մշակույթի կազմա-վորման պատմական ժամանակաշրջանում հանդես են գալիս մարդիկ, որոնք, ընդհան-րացնելով ժողովրդական մշակույթի ամբողջ նախորդ փորձը, ստեղծում են արվեստի հանձնարեղ նմուշներ՝ դնելով նրա հետագա ամբողջ զարգացման հիմքը:

Հայ ժողովրդի այդպիսի հանձնարեղ գա-վակն էր Կոմիտասը...»:

Սյունագարդ դահլիճի կամարների ներքո հնչում են ՍՍՀՄ և ՀՍՍՀ պետական հիմնե-րը:

Ձևկուցման համար խոսքը տրվում է ան-վանի երգահան Ա. Ի. Խաչատրյանին: Ձե-կուցողն իր խոսքի մեջ ասում է, որ «Մեծ գիտելիքների տեր և կրթված, լայն կատե-գորիաներով մտածող Կոմիտասը իր ժողո-վրդի երաժշտությունը համարում էր հա-մաշխարհային մշակույթի մի մասը: Եվ հայ երաժշտության, մանավանդ ժողովրդական

երգի ուսումնասիրման ու ստեղծագործա-կան վերաստեղծման առջև ծառայած պրոբլեմները նա լուծում էր համաշխարհա-յին երաժշտական ամբողջ արվեստի տեսա-կյունից»:

Այնուհետև իրենց ելույթներով հանդես են գալիս՝ ՌՍՖՍՀ երգահանների միության քարտուղար, պետական մրցանակի դափնե-կիր Բ. Ա. Չայկովսկին, Ուկրաինայի երգա-հանների միության վարչության նախագահ Ա. Յու. Շտոգարենկոն, Վրաստանի կույ-տուրայի մինիստր Օ. Վ. Թաթթաքիշվիլին, Ուզբեկստանի երգահանների միության վար-չության նախագահ Ա. Խ. Ջաբարովը, Ա-դրբեյջանի երգահանների միության վար-չության քարտուղար Ս. Ա. Ռուստամովը, Հայաստանի երգահանների միության վար-չության նախագահ Էդ. Միրզոյանը:

Երեկոյի հանդիսավոր մասն ավարտվում է: Սկսվում է հանդիսության գեղարվեստա-կան բաժինը, որին իրենց մասնակցությունն են բերում հայ և եղբայր ժողովուրդների արվեստի նշանավոր գործիչներ, որոնք մի անգամ ևս հնչեցնում են անմահ երգահանի անմահ ստեղծագործությունները և հուզում ու գեղագիտական մեծ հաճույք պատճառում ներկաներին:



Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամ-յակին նվիրված տոնահանդեսներ տեղի ու-նեցան նաև Սովետական Միության բազմա-թիվ այլ քաղաքներում՝ Մոսկվայում, Լենին-գրադում, Կիևում, Թբիլիսիում և այլուր: Մեծ երգահանի ծննդյան 100-ամյակին նվիրված տոնահանդեսներ տեղի ունեցան նաև աշ-խարհի բազմաթիվ այլ քաղաքներում՝ ամե-նուր խոսվելով հայ ժողովրդի և նրա մեծագույն գավակներից մեկի՝ Կոմիտաս վարդապետի մասին մեծագույն գովեստով և երախտագիտությամբ:

